ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/26

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Մասնակից՝ «Մովսեսյան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչներ՝ Շ. Հարությունյանի, Լ. Բաղդասարյանի, Հ. Արչունցի
«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մովսեսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցում, պատճենահանող և համակարգչային սարքավորումների պահեստամասերի և նյութերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1710-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.02.2020թ. թիվ Ե 158-20 գրության հիման վրա, 10.02.2020թ.-ին «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 10.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 14.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 14.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. <u>**««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը**</u>.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, 03.02.2020թ. թիվ Ե 131-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և «Մովսեսյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև սույն թվականի հունվարի 09-ին կնքված N «ՆՄԾՏԻԿ- ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում Ընկերությունը հունվարի 20-

ին մատակարարել է 2 հատ Օպերատիվ հիշողության սարք՝ GEIL և TIMETEC ֆիրմաների: Հիմնադրամի պատասխանատու ստորաբաժանման կողմից հունվարի 24-ին կազմված եզրակացությամբ Ընկերությանը տեղեկացվել է, որ GEIL ֆիրմայի օպերատիվ հիշողության սարքի փաթեթավորումը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված 1-ով նշված անհատական գործարանային փաթեթավորման պահանջին և առաջարկվել է եռօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը: Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը և հրաժարվում է շտկել այն: Ելնելով վերոգրյալից, Հիմնադրամը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը, 2020թ. փետրվարի 01-ից միակողմանի լրիվ լուծում է Պայմանագիրը:

Խնդրում ենք Ձեր հանձնարարականը նախաձեռնել «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական գործընթաց:»:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, 07.02.2020թ. թիվ Ե 158-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր թիվ 01.1/26-1/1058-2020 գրության՝ տեղեկացնում ենք, որ թիվ «ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը, «Մովսեսյան» ՍՊԸ-ին ուղարկված գրությունների, ծանուցումների և ստացված պատաս¬խանների պատճենները ՀՀ Ֆինանսների նախարարությանն են տրամադրվել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի սույն թվականի փետրվարի 03-ի թիվ Ե 131-20 գրությամբ:»:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ներկայացրել է հայտարարված «ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Մովսեսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ

26/26-1/1710-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով նաև հրավիրված նիստին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«10.02.2020թ. ԷՓ-միջոցով ստացվել է Ձեր գրությունը, որի կապակցությամբ Մովսեսյան ՍՊԸ-ն Ձեզ է ներկայացնում իր կարծիքը:

09.01.2020թ. կնքված ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14 պայմանագրի շրջանակում 20.01.2020թ.-ին ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին մատակարարել է պայմանագրով նախատեսված ապրանքները:

Նույն օրը Գնորդից ԷՓ միջոցով ստացվել է նամակ հետևյալ բովանդակությամբ

"Հարգելի գործընկեր, հիմք ընդունելով 09-ը հունվարի 2020թ.-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ- 19/14» ծածկագրով պայմանագիրը խնդրում եմ ներկայացնել մատակարարված ապրանքների արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:"

Նույն օրը Մովսեսյան ՍՊԸ-ն ԷՓ-ով գնորդին է ներկայացրել պահանջվող փաստաթղթերը: Հաջորդ որը 21.01.2020թ.-ին Գնորդից ստացվել է այլ նամակ, հետևյալ բովանդակությամբ "Հարգելի Անահիտ Օհանյան, շնորհակալություն ներկայացված փաստաթղթերի համար:

Մեր կողմից ի սկզբանե տեղի էր ունեցել թյուրըմբռնում Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված ֆիրմայի անվանում (OEM), ապրանքային նշան (OEM), մակնշում (OEM) և արտադրողի անվանում (OEM) նկարագրի մասով: Քանի որ Ձեր կողմից պարզաբանվեց, որ OEM- ը ապրանքային նշան կամ ֆիրմայի անվանում չէ, այլ ուղղակի նշում ապրանքն օրիգինալ արտադրողի կողմից արտադրված լինելու վերաբերյալ, ուստի խնդրում եմ երաշխիքային նամակում նշել մատակարարված ապրանքների ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը:

Հարգելի գործընկեր ևս մեկ խնդրանք, մատակարարված GEIL ֆիրմայի օպերատիվ հիշողության սարքի փաթեթավորումը չի համապատասխանում պայմանագրով նշված անհատական փաթեթավորման պահանջին, խնդրում եմ շտկել անհամապատասխանությունը:"

Ի պատասխան վերը նշված նամակին, Մովսեսյան ՍՊԸ-ը ներկայացուցիչը զանգահարել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ընթացակարգի գնահատող քարտուղար Լ. Բաղդասարյանին, փորձելով պարզել խնդիրը: Արդյունքում պարզվել է, որ մատակարարված ապրանքը Գնորդի կողմից անհիմն կերպով որակվում է որպես խախտված փաթեթավորմամբ, այնինչ այն Գնորդին է հանձնվել պատշաճ փաթեթավորմամբ:

Միաժամանակ Գնորդը անհիմն պահանջներ է ներկայացրել, պահանջելով որ Մովսեսյան ՍՊԸ-ն արտադրողի կողմից Գնորդի սահմանված ձևով լիազորագիր և սերտիֆիկատներ ներկայացնի, այլապես ապրանքը չի ընդունվի:

Նույն օրո, Մովսեսյան ՍՊԸ-ն իր պատասխան գրությամբ Գնորդի ներկայացուցիչներին հայտնել է, որ իրենց պահանջը անհիմն է, քանի որ ապրանքը հանձնվել է անհատական գործարանային փաթեթավորմամբ և առաջարկել է վերանայել վարքագիծը:

Միաժամանակ Մովսեսյան ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարին, խնդրելով Գնորդի կողմից իրականացվող ապօրինի գործողությունների կապակցությամբ ուսումնասիրություն և աուդիտ իրականացնել Գնորդի մոտ:

24.01.2020թ. ստացվել Գնորդի բացասական եզրակացությունը, ինչը ձևական հիմք է հանդիսացել մատակարարված ապրանքը չնդունելու և դրա դիմաց վճարում չիրականացնելու, իսկ հետագայում ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց սկսելու, ինչպես նաև ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի բանկային հաշվից 46750 ՀՀ դրամ գանձելու համար:

Ի պատասխան նշվածի, պատասխան նամակով Գնորդի ուշադրությունն ենք հրավիրել այն իրողության վրա, որ նրա կողմից տվյալ փաթեթավորումը խախտված համարելը, միայն այն պատճառաբանությամբ, որ փաթեթը նախատեսված է երկու սարքի համար, իսկ փաթեթում առկա է միայն մեկը, կամ որ այն բացված է կամ կապարակնքված չէ, չի տեղավորվում ողջամիտ տրամաբանության մեջ, ապրանքը չնդունելու համար զուտ ձևական պատճառաբանություն է և չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի, պահանջներին քանի որ Գնորդի ներկայացուցիչների կողմից իրականացվող գործողությունները հակասում են այն կազմակերպության շահերին, որի անունից նրանք հանդես են գալիս և միաժամանակ հակասում են կնքված պայմանագրի պայմաններին և նպատակին, քանի որ պայմանագրով

չեն նախատեսվել անհատական գործարանային փաթեթավորման այնպիսի նկարագրություն, ըստ որի այն կարող է որակվել որպես “խախտված փաթեթավորում”:

Ասվածից հետևում է, որ “խախտված փաթեթավորման” հիմքով ապրանքը չնդունելը չի բխում պայմանագրի պահանջներից և հակասում է դրանց:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն իրողության վրա, որ Գնորդի ու Մովսեսյան ՍՊԸ միջև նախկինում ևս նման խնդիր է առաջացել, քանի որ Գնորդը նախկինում ևս հրաժարվել է վճարել պայմանագիր պայմաններին լիովին համապատասխանող մատակարարված ապրանքների դիմաց, Մովսեսյան ՍՊԸ-ից անհիմն կերպով պայմանագրի կարգավորումներից չբխող պահանջներ ներկայացնելով, ինչի արդյունքում Մովսեսյան ՍՊԸ-ն 2018թ.-ից առ այսօր չի ստացել մատակարարված ապրանքների դիմաց վճարումը և ստիպված է եղել դիմել դատարան գումարի բռնագանձման պահանջով, իսկ գործը գտնվում է դատաքննության փուլում:

Հարգելի պարոն Օհանյան, Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն իրողության վրա, որ պայմանագրով նախատեսված “անհատական գործարանային փաթեթավորում” պահանջը պատվիրատուի կողմից պայմանագրում ներառվել է ըստ էության կամայական սկզբունքով, ոչ ցանկալի մատակարարների համար արհեստական խոչնդոտներ ստեղծելու նպատակով:

Այդ պայմանը չի նախատեսվել հրավերի և պայմանագրի ապրանքի տեխնիկական բնութագրով, որը Մովսեսյան ՍՊԸ-ն Պատվիրատուին է ներկայացրել հրավերով սահմանված կարգով իր հայտով: Այն նախատեսված է եղել հրավերով, տեխնիկական բնութագրերից զատ, որպես առանձին պայմանագրի պայման այլ ոչ տեխնիկական բնութագիր, և հետևաբար Գնորդի կողմից նշված հիմքով տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու կամ Պայմանագրի պայմանները էականորեն խախտելու հիմքով պայմանագիրը լուծելը չի բխում պայմանագրի կարգավորումներից:

Նկարագրված իրավիճակից ելնելով, Մովսեսյան ՍՊԸ-ն բավարար հիմքեր ունի եզրակացնելու, որ Գնորդի կողմից նման վարքագծի դրսևորումը պայմանավորված է Մովսեսյան ՍՊԸ-ի համար արհեստական խոչնդոտներ ստեղծելու միջոցով վնաս հասցնելու նպատակի առկայությամբ, ինչը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածնով նախատեսված հանցագործության առերևույթ հատկանիշներին, ըստ որի

“1. Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ և իր

կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու կամ առավերություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելը, եթե անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել՝

Պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով:”

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում նաև այն իրողության վրա, որ Գնորդի կողմից մատնանշվող ապրանքի անհատական գործարանային փաթեթավորում պայմանի խախտված լինելը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Մովսեսյան ՍՊԸ-ն Գնորդին է ներկայացրել անհատական գործարանային փաթեթավորմամբ պատշաճ որակի, անհատական փաթեթավորմամբ ապրանք, իսկ այն հանգամանքը, որ երկու ապրանքի համար նախատեսված տուփի մեջ եղել է մեկ ապրանք, որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես անհատական փաթեթավորման պահանջի խախտում, քանի որ տվյալ ապրանքը անհատապես փաթեթավերված է եղել իր համար նախատեսված տուփի մեջ, ինչը երևում է Գնորդի կողմից ներկայացված լուսանկարում:

Իսկ այն պնդումը, որ տուփը բացված է եղել նույնպես չի կարող մեկնաբանվել որպես անհատական փաթեթավերման պահանջի խախտում, քանի որ պայմանագրով նախատեսված չի եղել այնպիսի պայման, ըստ որի անհատական փաթեթավորման պայմանը պետք է ընկալվեր որպես փակ, չբացված տուփով, կապարակնքված փաթեթավորում: Նման պայման ողջամտորեն չեր կարող նախատեսվել նաև հաշվի առնելով ապրանքի տեսակը և բնույթը, ինչպես նաև նման ապրանքների համար սովորաբար կիրառվող փաթեթավորումը:

Վերոգրյալից հետևում է, որ Գնորդը իրավունք չուներ չնդունել իրեն մատակարարված պատշաճ որակի, տեխնիկական բնութագրերին համապատասխանող, պատշաճ փաթեթավորված ապրանքը և լուծել պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալներից Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2020թ. թիվ 26/26-1/1710-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը և Գնորդին պարտավորեցնել չեղարկել պայմանագրի միակողմանի լուծարման

գործողությունները, և ընդունել իրեն մատակարարված տեխնիկական բնութագրերին համապատասխանող պատշաճ որակի ապրանքը:

4. <u>ՍՑ-LO-2020/26 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 09.01.2020թ.-ին կնքվել է թիվ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը պետք է լինի չօգտագործված, անհատական գործարանային փաթեթավորմամբ և մակնշումով:

www.gnumner.am համացանցային կայքի պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների բաժնում 03.02.2020թ. հրապարակված թիվ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև սույն թվականի հունվարի 09-ին կնքված թիվ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում Ընկերությունը հունվարի 20-ին մատակարարել է 2 հատ Օպերատիվ հիշողության սարք' GEIL և TIMETEC ֆիրմաների: Հիմնադրամի պատասխանատու ստորաբաժանման կողմից հունվարի 24-ին կազմված Եզրակացությամբ Մասնակցին տեղեկացվել է, որ GEIL ֆիրմայի օպերատիվ հիշողության սարքի փաթեթավորումը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված 1-ով նշված անհատական գործարանային փաթեթավորման պահանջին և առաջարկվել է եռօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը և հրաժարվել է շտկել այն:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 09.01.2020թ.-ին կնքված թիվ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով պայմանագիրը ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից 01.02.2020թ.-ին

միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի ուժով (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1710-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ ամսի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 09.01.2020թ.-ին կնքված թիվ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով պետական գնման Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը պետք է լինի չօգտագործված, անհատական գործարանային փաթեթավորմամբ և մակնշումով:

www.gnumner.am համացանցային կայքի պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների բաժնում 03.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև սույն թվականի հունվարի 09-ին կնքված թիվ

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում Ընկերությունը հունվարի 20-ին մատակարարել է 2 հատ Օպերատիվ հիշողության սարք՝ GEIL և TIMETEC ֆիրմաների: Հիմնադրամի պատասխանատու ստորաբաժանման կողմից հունվարի 24-ին կազմված եզրակացությամբ Մասնակցին տեղեկացվել է, որ GEIL. ֆիրմայի օպերատիվ հիշողության սարքի փաթեթավորումը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված 1-ով նշված անհատական գործարանային փաթեթավորման պահանջին և առաջարկվել է եռօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը և հրաժարվել է շտկել այն:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 09.01.2020թ.-ին կնքված թիվ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով պայմանագիրը ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից 01.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի ուժով (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մովսեսյան» ՍՊԸ-ն մատակարարել է անպատշաճ որակի ապրանք (փաթեթավորումը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված 1-ով նշված անհատական գործարանային փաթեթավորման պահանջին) և հետագայում հրաժարվել է Պատվիրատուի համար ընդունելի եռօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը, որի արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 01.02.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 03.02.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Պայմանագրով սահմանված (Պատվիրատուի կողմից տրամադրված) ժամկետում չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված անհատական գործարանային փաթեթավորմամբ ապրանք, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1710-2020 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/26 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մովսեսյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ